ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 4Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 36-րդ կետերով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 20-ի թիվ 15 որոշման թիվ 1 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրության>> 3-րդ գլխի 10-րդ կետի պահանջներով՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կազմում Եղեգիս համայնքի ավագանու կողմից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու նպատակով հայտարարել մրցույթ:
2. Հաստատել խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ ավագանու կողմից առաջադրելու մասին մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ. Եղեգիս

Հավելված 1

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի

22-ը հունվարի 2019 թվականի թիվ 4 Ա որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին մրցույթի հայտարարության տեքստ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածի ներկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը,
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ,
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթը կկայանա 2019 թվականի փետրվարի 22-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմ հետևյալ հասցեով Վայոց ձորի մարզ, գ. Թառաթումբ, վարչական ղեկավարի նստավայր, հեռ.՝ 094-82-22-84:

Դիմումների տրման վերջնաժամկետն է՝ 18/02/2019թ.

Դիմող քաղաքացիները Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն ՝

ա/դիմում համայնքապետարանի աշխատակազմի անունով /դիմումի ձևը ազատ է/,

բ/խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափի,

դ/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: